Ministry of Territorial Administration and Infrastructure of the Republic of Armenia

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱԿԻՐՃ ՏԱՐԲԵՐԱԿԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ի՞ՆՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Մեր կողմից 2022 թվականի բյուջեի ծրագրային ձևաչափի ընտրությունը ուղղված է ծախսերի կատարման արդյունավետության բարձրացմանը և վերջնական արդյունքների ստացմանը:

Ծրագրային բյուջեն ցույց է տալիս 2022 թվականի բյուջետային ծրագրերն իրականացնելիս, որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում արդյունքների ձեռքբերումը՝ միաժամանակ արմատավորելով նոր որակի և մակարդակի կառավարում, ձևավորելով ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև ինտեգրացված կապ, ապահովելով բյուջետային ծրագրի միջոցառումների կատարման թափանցիկությունն ու վերահսկման արդյունավետ մեխանիզմը:

Ծրագրային բյուջետավորման գործընթացը հնարավորություն է տալիս համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ-ի) և տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) հիման վրա պլանավորել համայնքի ֆինանսական միջոցները, դրանք օգտագործել խնայողաբար, արդյունավետ և հրապարակային:

Կարևորելով մասնակցային գործընթացները տեղական ինքնակառավարման համակարգում՝ բյուջետավորման այս ձևաչափով ամրագրվում է հաշվետվողականությունը, շարունակականությունը, ծրագրերի առաջնահերթությունների հստակ սահմանումը, բյուջետավարման գործառույթների հստակ բաշխումը, չափելիությունը:

Որդեգրելով աշխատանքային նոր ռազմավարություն՝ համայնքի բյուջետավարումը դադարում է դիտարկվել որպես ֆինանսական պլանի կազմում և կատարում, այլ առավել կարևորվում են բնակչությանը համայնքային որակյալ ծառայությունների մատուցումը և համայնքի խնդիրների աստիճանական լուծումը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գավառ բազմաբնակավայր համայնքը ձևավորվել 2021թ. դեկտեմբերին և իր կազմում ընդգրկում է թվով 12 բնակավայրեր՝ Գավառ, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան: Համայնքի կենտրոնն է Գավառ քաղաքային բնակավայրը:

Գավառը՝ իր մեծակա տարածքով գտնվում է Սևանի ավազանի արևմտյան մասում, Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերին՝ 7-8 բալանոց սեյսմիկ գոտում: Գավառագետի ավազանի տարածքի մոտ 80%-ը գտնվում է մինչև 2000մ բարձրության վրա, ամենաբարձր լեռնագագաթը Աժդահակն է՝ 3598մ բարձրությամբ:

Գավառ քաղաքի բնակատեղին գոյություն է ունեցել մ.թ.ա. 8-րդ դարում: Քաղաքը հիմնադրվել է Ուրարտական թագավոր Ռուսա 1-ի կողմից /մ.թ.ա. 735-713թթ./, որի ապացույցն է Գավառի «Դարի գլուխ» կոչված դամբարանադաշտում հայտնաբերված մ.թ.ա. 732թ. սեպագիր արձանագրությունը: Հնագիտական պեղումներից պարզվեց, որ այս տարածքը մ.թ.ա. 2-1 հազարամյակից եղել է բնակեցված: Քաղաքը բնակեցված է եղել նաև Արշակունիների թագավորության ժամանակահատվածում /66-428թթ./: Գաղթական բայազետցիները Գավառ պատմական ավանի տեղում 1830թ. հիմնեցին Նոր Բայազետ բնակավայրը: Գավառը 1830թ. դառնում է Հայաստանի կարևոր տնտեսական կենտրոններից մեկը, իսկ 1960 – 1991թթ. քաղաքում կառուցվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, փողոցները

ասֆալտապատվեցին և լուսավորվեցին, կառուցվեցին բազմաթիվ բազմաբնակարան շենքեր, բարելավվեց ժողովրդի կենսամակարդակը:[1]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի 2022թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2022-2026թթ. ՀՀԶԾ-ն և 2022թ. ՏԱՊ-ը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- ✓ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- ✓ Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- ✓ Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- ✓ Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, ջրամատակարարման, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:
- ✓ Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- ✓ Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:
- ✓ և այլն:

Համայնքի 2022թ. զարգացման հիմնական ուղղություններն ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Բյուջեի կազմման գործընթացում, հիմք ընդունելով նաև ՀՀ կառավարության 2022թ-ի պետական բյուջետային ուղերձում ամրագրված ուղղությունները, ներդրվել են գենդերային զգայուն բյուջետավորման տարրեր, որի համաձայն տարբեր ոլորտների բյուջետային ծրագրերը, միջոցառումները, դրանց նպատակները, նկարագրությունները և արդյունքային ցուցանիշները կապված են նաև գենդերային քաղաքականության ռազմավարության միջոցառումների, նպատակների, գերակայությունների և արդյունքների հետ:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանու անդամներին, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2022 թվականի բյուջեի միջոցների գոյացմանը, դրանց նպատակային օգտագործմանը, բյուջեի կատարմանը և վերահսկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

[1] ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի անձնագիր, հասանելի է՝ http://gavarihamaynqapetaran.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbebab4291 հղումով

ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Համայնքի 2022թ. բյուջեի կանխատեսվող մուտքերը

2257780.3 հազար դրամ

հազար դրամ



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԸ 3 ՏԱՐՈՒՄ

հազար դրամ



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 3 ՏԱՐՈՒՄ

հազար դրամ



Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՆ ԾԱԽՍՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	2153481.8	100.0
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	546509.6	25.4
2.	Պաշտպանություն	2565.0	0.1
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.0	0.0
4.	Տնտեսական հարաբերություններ	198549.9	9.2
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	198585.0	9.2
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	62937.1	2.9
7.	Առողջապահություն	18000.0	0.8
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	373861.2	17.4
9.	Կրթություն	725474.0	33.7
10.	Սոցիալական պաշտպանություն	12000.0	0.6
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	15000.0	0.7

Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

հազար դրամ



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԲԱՇԽՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԻՋԵՎ

հազար դրամ



Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՆ ԾԱԽՍՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ, Ի՞ՆՉ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ

Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	
Ծրագիր 01. Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների պահպանում և արդիականացում	
Ծրագրի նպատակ	**Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն**
Ապահովել տեղական ինքնակառավարման իրականացումը Գավառ համայնքում, ունենալ բնակչությանը համայնքային ծառայությունների մատուցման արդյունավետ, մասնագիտացված, նպատակային և թափանցիկ համակարգ	Համայնքի բնակչությանը մատուցվում են հանրային բնույթի որակյալ ծառայություններ, բնակչության սպասարկման և աշխատակազմի գործունեության համար առկա են հարմարավետ աշխատանքային պայմաններ

Ծրագրի միջոցառումներ	**Գումար (հազար դրամ)**
Գավառ համայնքի աշխատակազմի, այդ թվում՝ վարչական ղեկավարների աշխատակազմերի բնականոն գործունեության ապահովում	386477.8
«Նորատուսի վարչական ղեկավարի նստավայրի կառուցում և գազատարի անցկացում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	3579.5
Ծառայողական մեքենայի ձեռքբերում	35000.0
Գույքի և տեխնիկայի ձեռքբերում	11000.0
Համակարգչային ծառայությունների ձեռք բերում, սպասարկման վճարների տրամադրում	2052.3
Համայնքային գույքի գնահատման, պետական գրանցման, վկայականների ձեռք բերման, սեյսմիկ ծառայությունների աշխատանքների իրականացում	22000.0
Համայնքային այլ ծառայությունների իրականացում	23800.0
ՀՏԶՀ-ի կողմից իրականացվող ՍՆՏԶ ԼՖ ծրագրի համաֆինանսավորում	12500.0
Տրանսպորտային միջոցի ձեռքբերում Կարմիրգյուղ բնակավայրի համար	2100.0
Գավառի երիտասարդների տան գործունեության ապահովում	8500.0
Նվիրատվություն բասկետբոլի «Բայազետ» թիմին	2500.0
Նվիրատվություն ՀԿ-ներին և միջազգային կազմակերպություններին	2000.0
Սուբվենցիոն ծրագրերի համար նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում	35000.0

Ոլորտ 2. Պաշտպանություն	
Ծրագիր 01. Համայնքի պաշտպանության կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում	
Ծրագրի նպատակ	**Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն**

Համայնքի լուման ներդնել երկրի պաշտպանության, արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման գործում	Համայնքի զորակոչիկները շահագրգիռ են երկրի պաշտպանության գործում իրենց լուման ներդնելու համար, համայնքում ստեղծված են անհրաժեշտ պայմաններ արտակարգ իրավիճակներին դիմակայելու համար

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
Զորավարժությունների համար նյութերի ձեռքբերում	1500.0
Շչակների ձեռքբերում	1000.0
Հրշեջ հիդրանտների ձեռքբերում	65.0

Ոլորտ 4. Տնտեսական հարաբերություններ

Ծրագիր 01. Համայնքի ենթակառուցվածքների զարգացում

Ծրագրի նպատակ	Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն
Նպաստել համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը և համայնքի սեփականություն հանդիսացող հողերի նպատակային օգտագործմանը	Համայնքում կապիտալ միջոցառումներ իրականացնելու համար առկա են բավարար միջոցներ, համայնքային ենթակառուցվածքները հիմնականում բարեկարգ են

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
Հողերի ագրոքիմիական կազմի որոշում	120.0
Գեղարքունիք և Լանջաղբյուր բնակավայրերում խմելու ջրի որակի ստուգում	380.0
Գանձակ բնակավայրում լիզինգով ձեռքբերված կոմբայնի գումարի տրամադրում	3399.4
Կարմիրգյուղ բնակավայրում լիզինգով ձեռքբերված կոմբայնի գումարի տրամադրում	3760.0
«Գեղարքունիք և Սարուխան բնակավայրերում ոռոգման ցանցի կառուցում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	7989.5
«Գանձակ բնակավայրում խորքային հորի հորատում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	9126.0
Ճանապարհների սպասարկում և ընթացիկ նորոգում	104500.0
«Կարմիրգյուղ բնակավայրի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	35332.1
«Ծովազարդ բնակավայրի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	2625.8

«Նորատուս բնակավայրի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	14910.0
«Լճափ բնակավայրի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	528.5
«Գանձակ բնակավայրի կենտրոնական հրապարակի բարեկարգում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	3868.7
«Գավառ բնակավայրի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	46948.4
«Սարուխան բնակավայրի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	1004.0
«Կանգառների ձեռքբերում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	40000.0
«Լուսացույցների ձեռքբերում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	24000.0
Գանձակ բնակավայրի համար տեխնիկայի ձեռքբերում	4356.0
Գույքի օտարում	-16000.0
Հողի օտարում	-88298.5

Ոլորտ 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն

Ծրագիր 01. Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում

Ծրագրի նպատակ	Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն
Համայնքի բնակավայրերը դարձնել մաքուր և բարեկարգ	Մաքուր բնակավայրերով և սանիտարահիգիենիկ բավարար պայմաններով համայնք

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	170240.0
Մարդատար մեքենայի ձեռքբերում	7000.0
Գավառագետի հունի մաքրում	7300.0
Թափառող կենդանիների ստերջացում	5000.0
Կանաչապատման աշխատանքների իրականացում	9000.0
Գանձակ բնակավայրում Գավառագետի ափի փլված հատվածի վերանորոգում	45.0

Ոլորտ 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

Ծրագիր 01. Ջրագծերի կառուցում	
Ծրագրի նպատակ	**Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն**
Ապահովել համայնքի ջրագծերի արդիականացման աշխատանքներ	Գավառ համայնքի բնակավայրերում մատուցվում են շուրջօրյա ջրամատակարարման ծառայություններ, բնակիչները գոհ են մատուցվող ջրամատակարարման ծառայություններից

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
Ջրի պոմպերի աշխատանքի ապահովում	9200.0
«Գեղարքունիք բնակավայրի խմելու ջրագծի կառուցում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	1071.0

Ծրագիր 02. Արտաքին լուսավորության ցանցի պահպանություն և ընդլայնում	
Ծրագրի նպատակ	**Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն**
Ապահովել համայնքի արտաքին լուսավորության համակարգերի անխափան աշխատանքը, իրականացնել արդիականացման աշխատանքներ	Բարձրացել է համայնքի փողոցների երթևեկության անվտանգության մակարդակը, դրանք հարմարավետ են տրանսպորտային միջոցների և հետիոտների համար

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
Գանձակ բնակավայրի համար արևային կայանի և ջրատաքացուցիչների ձեռքբերում	1601.6
Համայնքի փողոցների լուսավորում և լուսավորության համակարգերի ընթացիկ պահպանություն «Գավառ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից	46000.0
«Նորատուս բնակավայրում լուսավորության ցանցի կառուցում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	815.5
«Սարուխան բնակավայրում լուսավորության ցանցի կառուցում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	733.5
Գանձակ բնակավայրի համար լուսասյուների ձեռքբերում	3515.5

Ոլորտ 7. Առողջապահություն

Ծրագիր 01. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեության աջակցություն	
Ծրագրի նպատակ	**Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն**
Նպաստել «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից որակյալ ծառայությունների մատուցմանը	Որակյալ բժշկական ծառայություններ, առողջ հասարակություն

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
Դրամաշնորհի տրամադրում «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին	18000.0

Ոլորտ 8. Հանգիստ, մշակույթ և կրոն

Ծրագիր 01. Մշակութային կյանքի աշխուժացում

Ծրագրի նպատակ	Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն
Խթանել մշակութային միջոցառումներին երիտասարդների ակտիվ մասնակցությունը	Համայնքի բնակիչներն ապահովված են մշակութային ծառայություններից մշտապես օգտվելու հնարավորությամբ, ակտիվ մասնակցություն ունեն համայնքի տոնական և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներին

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
«Գավառի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ի և դրա մասնաճյուղերի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	36488.0
«Գավառի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերում	1260.0
Դրամաշնորհի տրամադրում «Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի մարզային գրադարան» ՊՈԱԿ-ին	3500.0
«Գավառի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի վարչական աշխատողներին աշխատավարձի փոխանցում	9898.0
«Գանձակի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	9663.0
«Սարուխանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերում	2000.0
«Սարուխանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի ջեռուցման համակարգի կառուցում	5200.0
«Գավառի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի վերանորոգում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	47252.5
«Սարուխանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի վերանորոգում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	10686.4
Համայնքում մշակութային միջոցառումների կազմակերպում	10000.0
«Արծրունի եղբայրների արձանախմբի պատրաստում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	24727.5
«Գավառի երիտասարդների տան շենքի արտաքին հատվածի և տարածքի հիմնանորոգում» ծրագրի համաֆինանսավորում	28000.0

«Խաղահրապարակի և խաղարանի կառուցում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	5110.0
«Գավառի եկեղեցու տարածքի հիմնանորոգում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	5925.8
«Շատրվանային համակարգի տեղադրում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	174150.0

Ոլորտ 9. Կրթություն

Ծրագիր 01. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում, աջակցություն համայնքում կրթական գործընթացների կազմակերպմանը

Ծրագրի նպատակ	Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն
Ապահովել համայնքում որակյալ կրթական ծառայությունների մատուցումը	Համայնքում մատուցվում են որակյալ կրթական ծառայություններ

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
«Գավառի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	27958.2
«Գավառի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	34657.7
«Գավառի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	35402.2
«Գավառի թիվ 7 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	34385.7
«Գավառի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	34224.2
«Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի վարչական աշխատողներին աշխատավարձի տրամադրում	9630.0
«Սարուխանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	19526.2
«Նորատուսի Ս. Հակոբյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	29561.0
«Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	29970.0
«Կարմիրգյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	24170.0

«Գեղարքունիքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	14497.0
«Լանջաղբյուրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	18764.7
«Լճափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	14687.8
«Ծովազարդի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	17662.5
«Գանձակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում	26630.0
«Սարուխանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հիմնանորոգում» սուբվենցիոն ծրագրի համաֆինանսավորում	8399.7
Դրամաշնորհի տրամադրում Գեղարքունիք բնակավայրի դպրոցին	500.0
Գավառի թիվ 1 հիմնական դպրոցում 44-օրյա պատերազմում նահատակված շրջանավարտների հիշատակին դասասենյակի հիմնում	6250.0
Նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատություններում սովորողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում	400.0
Բուհերում սովորողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում	8000.0

Ծրագիր 02. Արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցում

Ծրագրի նպատակ	Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն
Ապահովել արտադպրոցական դաստիարակության որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի երեխաները տիրապետում են զանազան երաժշտական գործիքների, արվեստների և մարզաձևերի, ըստ արժանվույնս ներկայացնում են համայնքը մարզամշակութային միջոցառումներում

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
«Գավառի ուսուցողական կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	18324.8
«Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	19716.7
«Գավառի մարզադպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	39772.0
«Գավառի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	41648.0

«Գավառի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	48086.5
«Գավառի Գ. Դաբաղյանի անվան դուդուկի մասնագիտացված դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	7565.0
«Սարուխանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	39300.7
«Կարմիրգյուղի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	37119.8
«Նորատուսի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	38572.1
«Գանձակի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանություն	19841.5
Դրամաշնորհի տրամադրում համայնքի արտադպրոցական հիմնարկներին	15250.0
«Գավառի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում	5000.0

Ոլորտ 10. Սոցիալական պաշտպանություն

Ծրագիր 01. Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին

Ծրագրի նպատակ	Ծրագրի վերջնական արդյունքի նկարագրություն
Թեթևացնել համայնքում բնակվող անապահով ընտանիքների հոգսերը	Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը բարձրացել է

Ծրագրի միջոցառումներ	Գումար (հազար դրամ)
Սոցիալական աջակցություն սոցիալապես խոցելի ընտանիքներին	12000.0

Ի՞ՆՉ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼՈՒ

ՀԱՄԱՅՆՔԻ ԾԲ-Ի ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ[2]

Ծրագրի դասիչ	Ծրագիր	Ծրագրի վերջնական արդյունքի		
		ցուցանիշ	ցուցանիշի արժեք	ժամկետ
Բաժին (Ոլորտ) 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ				
01-01	Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների պահպանում և արդիականացում	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	80	2022թ. հունվար-դեկտեմբեր
		ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը, %	65	
		Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	29	
		Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը, %	80	
Բաժին (Ոլորտ) 2. Պաշտպանություն				
02-01	Համայնքի պաշտպանության կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում	Զինծառայողների կարծիքը կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ (հարցումների հիման վրա), 10 բալանոց սանդղակով	8-լավ	2022թ. հունվար-դեկտեմբեր
		Համայնքում բնակվող զինապարտ քաղաքացիների գրանցամատյանի վարումը՝ այո/ոչ	այո	
		Համայնքում հանրային անվտանգության մակարդակը, %	80	
Բաժին (Ոլորտ) 3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն				
Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության ոլորտում 2022 թվականին ծրագրեր չեն նախատեսվում իրականացնել				
Բաժին (Ոլորտ) 4. Տնտեսական հարաբերություններ				
04-01	Համայնքի ենթակառուցվածքների զարգացում	Գույքի օտարումից գոյացած մուտքերի մասնաբաժինը ընդհանուր մուտքերի կազմում, %	30	2022թ. հունվար-դեկտեմբեր
		Գյուղատնտեսության բնագավառում զբաղվածության աճը նախորդ տարվա համեմատ, %	1	
		Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ, %	50	
		Բարեկարգ և անցանելի միջբնակավայրային ճանապարհների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %	60	
Բաժին (Ոլորտ) 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն				

[2]Աղյուսակում վերջնական արդյունքի որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ, որտեղ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ

05-01	Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացում	Սանիտարական մաքրման ենթարկված տարածքների մակերեսի տեսակարար կշիռը սանիտարական մաքրման ենթակա տարածքների ընդհանուր մակերեսի մեջ, %	10	2022թ. հունվար-դեկտեմբեր
		Համայնքում հավաքված և աղբավայր տեղափոխված աղբի քանակի տեսակարար կշիռը համայնքում առաջացող ամբողջ աղբի քանակի մեջ, %	60	
		Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա), 10 բալանոց սանդղակով	8-լավ	
Բաժին (Ոլորտ) 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն				
06-01	Ջրագծերի կառուցում	Ջրատար խողովակների վիճակը, ըստ ոլորտի աշխատակիցների գնահատումների, 10 բալանոց սանդղակով	5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ	2022թ. հունվար-դեկտեմբեր
06-02	Արտաքին լուսավորության ցանցի պահպանություն և ընդլայնում	Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	70	2022թ. հունվար-դեկտեմբեր
Բաժին (Ոլորտ) 7. Առողջապահություն				
07-01	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեության աջակցություն	«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեության արդյունավետության աճը՝ նախորդ տարվա համեմատ, %	2	2022թ. հունվար-դեկտեմբեր
Բաժին (Ոլորտ) 8. Հանգիստ, մշակույթ և կրոն				
08-01	Մշակութային կյանքի աշխուժացում	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, %	60	2022թ. հունվար-դեկտեմբեր
		Բնակիչների բավարարվածությունը մատուցվող մշակութային ծառայություններից (հարցումների հիման վրա), 10 բալանոց սանդղակով	8- լավ	
		Գրադարանից օգտվողների թվի աճը՝ նախորդ տարվա համեմատ, %	2	
Բաժին (Ոլորտ) 9. Կրթություն				
09-01	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում, աջակցություն համայնքում կրթական գործընթացների կազմակերպմանը	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	70	2022թ. հունվար-դեկտեմբեր
		ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը համապատասխան տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	60	
09-02	Արտադպրոցական դաստիարակության ծառայությունների մատուցում	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	60	2022թ. հունվար-դեկտեմբեր
		Մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	65	

		Բնակիչների բավարարվածությունը մատուցվող արտադպրոցական դաստիարակության ծառայությունից, (հարցումների հիման վրա), 10 բալանոց սանդղակով	7-բավականին լավ	
Բաժին (Ոլորտ) 10. Սոցիալական պաշտպանություն				
10-01	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին	Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականության վերաբերյալ բնակիչների կարծիքը (հարցումների հիման վրա), 10 բալանոց սանդղակով	5 – միջին՝ ոչ լավ, ոչ վատ	2022թ. հունվար-դեկտեմբեր
		Սոցիալական աջակցություն ստացած բնակիչների տեսակարար կշիռը սոցիալական աջակցության նպատակով դիմում տված բնակիչների թվի մեջ, %	50	
		Համայնքում սոցիալական ծրագրի առկայությունը՝ այո/ոչ	այո	